Հայաստանում մրցակցության ու պետական աջակցության օրենսդրության կիրարկման հզորացում

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	Պետական աջակցություն ու մրցակցություն
Տևողություն՝	24 ամիս
Իրականացման ժամանակահատված՝	փետրվար 2011 - Հունվար 2013
Բյուջե՝	1.1 մլն եվրո

Շահառու մարմին՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

ԵՄ անդամ պետության գործընկեր Առաջատար գործընկեր՝
Տնտեսության ու տեխնոլոգիաների Գերմանիայի Դաշնային նախարարություն / Դաշնային կարտելի գրասենյակ, Գերմանիա
Կրտսեր գործընկեր՝
Լիտվայի Հանրապետության մրցակցության խորհուրդ, Լիտվա

Ծրագրի նկարագիր

Նպատակ. Հզորացնել բարելավված մրցակցության ու պետական աջակցության օրենսդրության ու քաղաքականության կիրարկումը, ինչպես նաև հզորացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի վարչական կարողությունները:

Բաղադրիչներ.

Բաղադրիչ I: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ինստիտուցիոնալ կառուցվածք,

Բաղադրիչ II: Մրցակցության օրենսդրության ու իրականացման Կանոններ,

Բաղադրիչ III: Պետական աջակցության օրենսդրության ու իրականացման կանոններ,

Բաղադրիչ IV: Մրցակցության օրենսդրության վերաբերյալ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի կարողությունների հզորացում,

Բաղադրիչ V: Պետական աջակցության վերահսկողության վերաբերյալ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կարողությունների հզորացում,

Բաղադրիչ VI: Համապատասխան մարմինների շրջանակում մրցակցության ու պետական աջակցության օրենսդրության մասին իրազեկություն,

Բաղադրիչ VII: SS ենթակառուցվածքներ

Ձեռք բերված արդյունքներ:

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են .

ա)Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ինստիտուցիոնալ կառուցվածքը հզորացվել է կարողությունների բարելավման, ներքին ընթացակարգերի, վերլուծական, դեպքի կառավարման ու որոշումների կայացման գործիքների միջոցով,

բ)Աշխատակազմի կարողությունները իրավական ակտերի նախագծման ոլորտում, ընթացակարգերը, Եմ լավագույն փորձի իմացությունը, երրորդ կողմերի՝ կառավարական մարմիններ, լրատվամիջոցներ, դատական ոլորտ, հետ համագործակցությունը բարելավվել է,

գ)Համապատասխան շահառուների իրազեկությունը բարձրացվել է. գործարարներ, լրատվամիջոցներ-լրագրողներ, դատական ոլորտ, համապատասխան պետական մարմիններ,

դ)Ծրագրի առաջարկություններով մշակված SS համակարգը կիրառվել ու գործածության մեջ է դրվել:

Հավելյալ տեղեկատվություն